

յիշոցքն է) ամիրաներ ու եկեղեցականներ՝ միտք ու ջանք ունեցեր են մօտ տարիներս՝ Հայոց եւ Յունաց եկեղեցիները միացնելու, կըսեմք թէ այն դիտաւորութիւնը կամ ջանքը սոսկ եղջերուաբաղ կամ խրտուիլակ մըն է՝ մեր բարեմիտ ժողովուրդները շփոթելու մտքով՝ քանի մը չարամիտներէ հնարուած, ու Փարիզ անուանեալ լրագրին մէջ միամտութեամբ կամ չարութեամբ հրատարակուած:

Բայց որովհետեւ այս խօսքն ալ կըսէ լրագիրը յանդգնաբար, — այսինքն Երկու տղին «մեծաբանս սնտոեաց բարբառող» հեղինակին ոճովը, թերեւս եւ բերնովը, թէ «Եթէ նո՛ւ» «բէն տարածեն այդ սուտ խօսքերը թէ բնաւ «Յունաց եկեղեցւոյն հետ միաւորութեան խօսք չի եւ» «դա՛ծ, այն ժամանակ ինքը Վեհ. Ս. Կաթողիկոսը պիտի սխալի շրջաբերական հանել ու «եղելութիւնը մի ըստ միովէ պատմել.» — ահա մեք, ստուգութեամբ գիտնալով որ Վեհափառ Կաթողիկոսին անունը այս բանին մէջ զուր տեղը եւ յանդգնաբար մէջ բերուած է, — ահա մեք՝ կըսեմք եւ կը-

կրկնեմք թէ ԲՆԱԻ ՅՈՒՆԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀԵՏ ՄԻԱԽՈՐՈՒԹԵԱՆ ԽՕՄԲ ՁԷ ԵՂԱԾ: Տեսեմք թէ երբ պիտի հրատարակէ անուանեալ Փարիզը այն շրջաբերականը՝ զոր ինքը կըսէ թէ Վեհափառ Կաթողիկոսը հանելու պիտի սխալի (չգիտեմք յուսմէ):

Արդեօք բարեսէր ընթերցողք աւելի իրաւունք չունին յուսալու որ Սրբազան Կաթողիկոսը այդպիսի լիրբ եւ խռովարար լրագրաց դէմ կամենայ հանել վաղ կամ անագան իրեն սլատկառելի շրջաբերականը:

Այսպիսի լրագրաց մէկն է ահա նաեւ Պօլսոյ Մեղրու անուանեալ անո՛ճ եւ չարախոյն հանդէսը, որ — ինչպէս այս օրերս ստուգեցինք — երգում ըրեր է եղեր որ ազատութեամբ (այսինքն լրբութեամբ) գիր անցընէ ու հրատարակէ, առանց բնաւ ֆինկոյ, ո՛ր եւ իցէ չարախօսութիւն եւ զրպարտութիւն, մանաւանդ ընդդէմ եկեղեցականաց ազգիս առ հասարակ՝ հեռաւորաց եւ մերձաւորաց, կենդանեաց եւ ննջեցելոց:

ԵՒՐՈՊԱՅԻ ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔԱՅ ԲՆԱԿԻՉՆԵՐՈՒՆ ԹԻՒՎ

(Ըստ նոր աշխարհագրի.)

Լոնտոն	— — — — —	2,950,000.	Ամսդերտամ	— — — — —	243,755.
Փարիզ	— — — — —	1,525,535.	Փէշմ եւ Պուտա	— — — — —	186,945.
Կոստանդնուպօլիս	— — — — —	900,000.	Հոռմ	— — — — —	180,359.
Փեմբուրկ	— — — — —	494,646.	Թուրին	— — — — —	170,635.
Վեննա	— — — — —	476,222.	Համպուրկ	— — — — —	171,696.
Պեռլին	— — — — —	438,961.	Քոփէնհագն	— — — — —	143,591.
Նափոլի	— — — — —	413,920.	Վեննաիկ	— — — — —	118,172.
Մատրիտ	— — — — —	301,660.	Տրեզան	— — — — —	117,750.
Լիսպոն	— — — — —	275,286.	Միւնիք	— — — — —	114,734.
Պրիւքսէլ	— — — — —	263,481.	Սթոքհոլմ	— — — — —	101,502.

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն.

Առ Տ. Գ. Մ. — Ձեր տուած մեկնութիւնը շատերը տուին, ամենքդ ալ կմիաբանիք կարծել թէ Կարիպպոսին՝ Իտալիոյ գիւցաղնը՝ լինի եւ մեր հանելուկին գիւցաղնը: Բայց մեր հանելուկը Դիոն Սիրակուսացիին համար էր, որ Պլատոնի աշակերտն էր ու բարեկամ, եւ

Հայրենիքը ազատեց Դիոնեսիոս սիրակուսացի բռնաւորին ձեռքէն, ամենեւին նոյն պարագաներով՝ որով նոր Դիոն մը՝ Կարիպպոսին ազատեց իւր Հայրենիքը՝ Դիոնէ երկու հազար երկու հարիւր քսանը չորս տարի ետքը: — Չարմանալի նմանութիւն Հայրենասիրաց: